886
L. IV. 5

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ

ԹԵՐԹ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԼՐԱԲԵՐ — ՆԻՒ ԵՈՐՔ, ՄԱՅԻՍ 24, 1895 · — ԹԻՒ 1·

ՀԱՅԱՍՏԱՆ

« Ողբա՛մ զքեզ Հայոց Աշխարհ ։»
ԽՈՐԵՆԱՑԻ

Դարերու սկիզբէն ի վեր Հայոց Աշխարհ եղեր է տեսարան ցաւոց և վշտաց, ահաւոր աւերածոց և սրածութեանց։ Հուր և սուր անընդհատ գտեր են անդ սնունդ։ Դար, և տարի իսկ, չէ անցեր որ սրբապիղծ ոտքեր չը կոխոտեն Հայուն սրբավայրեր, և բռնակալին դրօշ արիւնաթաւ ի վեր չբարձրանայ տանելով գերի Հայու կին, Հայու աղջիկ։

Հազար չորս հարիւր տարիներու այն ընթացք, որոյ երկու ծայրերը կը կենան երկու օրհնեալ անձնաւորութիւններ, Հայոց Պատմութեան Հայրն Մովսէս Խորենացի, և Հայոց Հայրիկն Խրիմեան Կաթողիկոս, կը բացուի մեր առջև իբրեւ չար Ազգային ողբերգութեան մը արիւնալից տեսարաններու։

Բայց յիշել այդ երկու անուններ ի միասին՝ կը սթափեցնէ զմարդ։ Ի՞նչ ահաւոր հեռաւորութիւն և ի՞նչ սև աւերակներ կը բաժնեն զանոնք, բայց ի՞նչ քաղցր ներդաշնակութիւն երկու վեհ հոգիներու։ Ո՞րպէս եղած է այդ կարելի։

* * *

Ուրիշ ազգեր ևս բռնակալաց սրոյն ներքև ինկեր են, և նոցա արեան հեղմամբ և չղթաներու ճնշմամբ, նոցա հոգւոյն զօրութիւնն ևս նուաղեր և ազգային կեանքը կորսուեր է։ Իսկ Հայաստան այդ դարերու ահեղ արկածներու մէջ իրաւ կորուսեր է իւր փառաւոր դիրքն ի մէջ ազգաց· վար, վար ինքեր և մոխրոյ և արեան մէջ թաղուեր են նորա դրօշ և թագ և սուր, և պատմութիւնն շատանց մերժեր մոռցեր է յիշատակել Հայու անունն իսկ· բայց Հայութեան ոգի և սիրտ մնացեր են վառ և կենդանի իբրև մին ի հրաշալեաց աշխարհի պատմութեան· և Աւարայրի դարագլխէն մինչև մեր օրերը չէ պակասեր երբէք Հայուն քահանայն եւ հերոսն։ Ելեր են Ներսէսներ, Պատկանեաններ, Խրիմեաններ ի մի խառնելով ե՛ւ քահանայն ե՛ւ հերոսն։ Եւ ահա՛, Հայաստանի օրհնեալ հողին վրայ կացեր մնացեր է իւր կատարեալ հանգամանօք, Հայ գիւղացին, Հայ արուեստաւորը, որ եղեր է իւր տան քահանայ և զօրական միանգամայն։

* * *

Այս հրաշալիք եղեր է կարելի, վասն զի Աստուած պահեր է Հայ ընտանիքը, կարդելով անոր պահապան հրեշտակ՝ Հայ Կինը։ Հայ ընտանիք՝ գանձարան Հայոց դարաւոր հարստութեան՝ մտաց և հոգւոյ — Հայ ընտանիք ինքն եղեր է Հայոց Աշխարհի անառիկ միջնաբերդը զոր ո՛չ անօրէն կամք և ո՛չ սրբապիղծ ձեռք արիւնկզակ բռնապետներու կարող եղեր են գրաւել և իւրացուցանել։ Եւ այսօր ևս այդ անառիկ միջնաբերդէն դուրս կուգան Հայ հովիւն՝ մխիթարել և սփոփել ժողովուրդը, և Հայ հերոսն՝ պաշտպանել նորա անբռնաբարելի իրաւունք։ Սոցա արժանաւոր ներկայացուցիչ են՝ Հայոց Հայրիկն և Սասունի քաջ գիւղացին։

Մեծ է այս իրողութեան նշանակութիւնը Հայոցս համար որ կը գտնուինք հեռու Հայաստանէ, քաղաքակրթեալ ազգաց աշխարհի մէջ։

* * *

Աւեր Հայաստան դարձեալ կ՝աւերի· դաղանային կրից և դիւաչունչ ասելութեան անմեղ զոհերու արեամբ դարձեալ ներկուած են Հայոց դաշտեր և «ողէխարշ բողոք» կը բառնան յերկինս։ Հայ

որ ունի ողջ սիրտ՝ կը յուզուի զայրաթիւ և կը գալարին իւր ագիք։ Եւ ահա՛ եկած ենք գտնել դեղ Հայաստանի ցաւոց և ի ձեռս բերել Աղատութիւն Հայրենեաց։

Բնական է մեզ նայիլ օտարաց, զի նոքա են այսօր տէր քաղաքական զօրութեանց, և զի Հայն կը տեսնենք անուս, անզօր, վհատեալ գերի՝ դաժան և անգութ ցեղի լծոյն ներքև ընկճեալ։ Եւ միտեալ ենք մոռանալ Հայաստանի հրաշալիքն — Հայ քահանայն և Հայ գիւղացին։ մոռանալ թէ Հայ ժողովուրդ պահեր է Հայ ազգութիւն՝ ոսկեղինիկ հանգամանօք զարդարեալ։ թէ Արևելից հինաւուրց Հայն այսօր կը հանէ բանաստեղծ որոյ երգն հիացում կ'ազդէ Արևմտից նոր դարու գրագիտին։ Հայ արուեստաւոր՝ որ կը հասնի կը մրցի մեծ ազգերու զարակաց հետ։ Հայ զօրավար՝ որ կը հրամայէ Եւրոպական բանակի։ Հայ դիւանագէտ՝ որ խորհուրդ կը չափէ նոցա դահլիճներու մէջ։ թէ մեր կոչում չէ տանիլ ցանել ազգութեան դաղափար, չինել Հայ ազգ, այլ թէ Հայ ժողովուրդ մեծ ազգ է այսօր։

Եթէ Հայն ընկճեր թմրեր է, նորա մէջ է Հայութեան հզօր սիրտը։ Նորա մէջ են թաղուած անհուն այժեր։ Մեր գործն է զարթնուլ և զարթուցանել Հայ ժողովուրդը։ Այդպէս ըմբռնելով Խրիմեան Հայրիկ կ'ըսէ։ «Վերը Աստուած վարը մենք։ օտարէն յոյս չկայ մեզ »։ Այդպէս տեսնելով Պատկանեան, երբ կոչում կ'ընէ ամէն դասակարգի Հայոց ընել «չատ բան», կը դնէ անոնց առջև իրրև գերագոյն գործ—

« Հայը կըստիպէ վեհ Պատրիարքին, Ցորդորակ սփռել բոլոր Հայ Ազգին, Թօթուել, զարթեցնել մեր թմրած Հոգին, Եղբա՛ր, ալ՛ չասենք, Հայե՛ր, ինչ՞ անենք։»

Հայ ժողովուրդն ինք պիտի գործէ իւր փրկութիւն։ Հայ ազգն ինք պիտի կորզէ օտարին ձեռքէն իւր ազատութիւն։

ՀԱՅԵՐ Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ

« Հիմի էՂ լռենք »։

Ուրիշ ազգերու գաղթականութեանց նման բնական է որ Հայեր ևս Միացեալ Նահանգաց մէջ մէկտեղ գան կազմել ազգային միութիւններ, ոչ թէ անձնական շահու համար, այլ վասն զի Հայրենեաց յիշատակներու պատճառաւ միմեանց վրայ համակրութիւն կը զգան, և ի սէր այդ յիշատակաց կուզեն պահել իւրեանց ազգային հանգամանքը, յիշել Հայրենեաց մարտիրոսներու և բարերարներու տօնները, և մատուցանել միմեանց ինչ օգնութիւն որ կարելի է։ Կարևոր է այս և յոյժ բարի։

Սակայն այսօր երբ այդպիսի խորհրդով կ'ելնենք գրել, խօսիլ, ձայն մը մեզ կը կասեցուցնէ։ Ցուցում մը կայ աշխարհի մէջ։ օրուան խնդիր մը՝ որ կը վրդովէ ամէն ազգասէր սիրտ։ Սոսկալի արհաւիրքներու լուր և պատմութիւն կը ծանուցուի։ ժողովներ կ'ելլան, բողոքներ կը հեռագրուին, պատգամաւորք կը դրկուին իշխանութեանց, ողջոյնք և պատգամներ կը բարձրանան առ Աստուած։ Եւ մենք կը խորհինք։

Այո՛, ասէով կը խորհինք գիշեր և ցերեկ։ և յանկարծ կը սկսինք ըմբռնել թէ ինչ է որ կը կատարուի։ Եւ կը սեղմենք մեր կուրծք ուր կարծես սիրտը սարսափով կը մերժէ այլ ևս բաբախել, և ձեռօք կը կոխենք մեր գլուխ ուր մտքեր փուչ փուչ կը կանգնին։

Հայո՛ն են ահարկու ազէտք որ քաղաքակրթեցուցեր են քաղաքակրթ աշխարհը։ Հայո՛ց Աշխարհն է զոր արիւն և մարմիր հուր և սուր, մոլեգնեալ գազաններու ձեռօք ի խաղ ելած, դժոգոյ են դարձուցեր։

Ոչ միայն աւեր և գազանային սպանութիւն, այլ այսօր Հայ կիներ և Հայ աղջիկներ վատ գերութեան մատնուած գարշելի բռնաբարութեան տակ կը ճնշուին կը սպանուին։ Եւ մենք Հայ եմք։

* * *

Եւ Հայ որոյ սիրտ չէ մեռած կը կանգնի կը պնդէ իւր մէջը, և կը ճգնի բան մը ընել։ կ'ուզէ վազել դիմել ձէնք կամ բահ առած՝ փրկել զիւր քոյր, զիւր եղբայր։ Բայց ազգեր սահմանադրութիւններ են գծեր։ միջազգային օրէնք պատուարներ են կանգներ։ Գոնէ կարենայինք հիւանդին դարման, սովեալին հաց տանիլ։ Այլ ո՛չ։

Այսօր չկայ թոյլտուութիւն որ երթանք Հայաստան մէկտեղ հոգնինք, մէկտեղ ցանենք, և կեանք առնուն Հայոց դաշտեր։ Մահ և սարսափ միայն կը տի-

րէ մեր հայրենեաց հողին վրայ։ Բայց այսօր, այս ժամուս կայ գերագոյն գործ մը կատարելու զոր պարտինք մէկտեղ կատարել։ Ազգերը ունին սակաւ ինչ պատուոյ զգացում. մարդկութեան մէջ մնացեր է գթութիւն և ամօթ.

Մէկտեղ դարձենք, մէկտեղ ճգնինք,
Մէկտեղ թափենք քրտինք արեան,
Զայն բոլորոյ յերկինս հանենք,
Թերևս զարթնու խիղճ մարդկութեան։

Այս է այսօրուան գործը. վաղը կարելի է մեծագոյն և դժուարագոյն գործ ելնէ մեր առջև և տեսնենք թէ զայն ևս պարտական ենք կատարել։ Բայց այ՛ս թէ այ՛ն, ինչ և ըլլայ կատարելու գործը, յաջող և ազդու կերպիւ կատարելու միայն մէկ ճանապարհ կայ, և այն է՝ գործել մեր ամբողջ ազգային զօրութեամբ որ կայ բոլոր Հայ Գաղթականութեանց մէջ. որով Բալիֆօրնիայի պարարիզի մը՝ կամ Ուսթբրի գործարանի մը մէջ աշխատող խոնարհագոյն գործաւորն իսկ պիտի զգայ թէ ինք իսկական մասն ունի կատարուած գործին՝ արձակուած բաղաքին մէջ։ Ամերիկայի տասն հազար Հայոց ի մի ազգային մարմին կազմուելովն, պիտի զարթնու և գայլանդ իման ազգային ոգւոյ բարոյական այժ որ հրաշներ պիտի գործէ։

* *

Պարզ Ազգային կազմաւորութիւն ամէն կողմ, և միացում և կեդրոնացում՝ ժողովրդեան զօրութեան, կամքի և դրամի ներկայացուցիչ մարմնոյ մը միջոցաւ— այս է այսօրուան պահանջն, և Ամերիկայի Հայեր կարող են զայս լաւ կատարել քանի մը օրուան մէջ։

Ս.ՀԱ՝ ՃԱՄԲՅՑ

Ուղիղ գործին ճամբան միշտ պարզ է, և քիչ խօսքով կը բացատրուի։ Միացեալ Նահանգաց սահմանադրութիւնը եօթն յօդուած ունի, և հարիւր տարուան մէջ վրան աւելցեր է միայն տասնեւհինգ յօդուած բարեփոխում։

Թերթիս նախորդ յօդուածներու խորհուրդներ Նիւ Եորքի մէջ երեք ընդհանուր ժողովներու առջև խօսուելով և ի քննին առնուելով, տասներկու անձերէ կազմուած Ցանձնախմբի մը ձեռամբ դրուած են այժմ իր հինգ յօդուածներէ բաղկացեալ պարզ ծրագրի մէջ։ Հիմնական սկզբունքն է՝ ժողովրդական վարչութիւն՝ ներկայացուցիչ մարմնոյ միջոցաւ։ Ծրագիրն տպուած է այժմ աւելի դիւրաւ քննուելու համար։ Յաջորդ ժողովոյ մէջ սորա վերջնական որդեգրմամբ՝ Նիւ Եորքի և շրջակայից Հայ մարմինն պատրաստ պիտի ըլլայ թէ տեղական գործունէութեան և թէ ներկայացուցիչ կարգելու կեդրոնական մարմնոյն համար։

Ուրիշ Նահանգաց մէջ գտնուող Հայ մարմիններ նոյն պարզ ճամբով կրնան իսկոյն կազմակերպուիլ և մի քանի օրուան մէջ կրնանք կեդրոնացնել մեր բոլոր կամք և այժ մատուցանելու ին՛չ նպատակ որ կարելի է ազգին մեծ գործոյն։

* *

Եւ սա է կերպն.

Հինգ, տասն կամ աւելի անձինք մէկտեղ գալով կը ջրկեն հրաւէր տեղւոյն բոլոր Հայոց որ գան ի ժողով՝ տեղական ընդհանուր ազգային մարմին կազմելու համար։ Այդ ժողովոյ մէջ ամէն Հայ կ՚ունենայ բոլորովին հաւասար ձայն և մէկ քուէ։ Քուէիս կ՚ընտրուի Ատենապետ, Ատենադպիր և Գանձապետ, իւրեանց օգնականներով, և հինգ կամ աւելի անդամներէ կազմուած Ցանձնախումբ մը՝ որ ըլլայ ներկայացուցիչ մարմին, և գործէ ըստ հրահանգի Ընդհանուր ժողովոյ։ Ընդհանուր ժողովոյն պաշտօնական լեզուն կ՚ըլլան ի պաշտօնէ պարզ անդամ Գարծաղիր Ցանձնախմբին։

Այս բոլոր ընտրութիւնք կրնան ժամանակաւոր ըլլալ, և յետոյ աւելի դիտաղութեամբ մնայուն պաշտօնակալներ հաստատուիլ մէկ տարուան համար։

* *

Այս տեղական մարմին կրնայ արդ, ուրիշ տեղերու մարմնոյ հետ, ընտրել ներկայացուցիչ՝ Կեդրոնական Ցանձնախմբին համար, և ահա՛, ընդհանուր հզօր կազմակերպութեան մը գործը կատարուած է. վասն զի այդ ներկայացուցիչք կը բերեն կամքն և զօրութիւն բոլոր Հայ Գաղթականութեան, և ի դիմաց անոր կրնան խօսիլ Ազգին և աշխարհի, և կրնան ձեռնարկել կատարելը այն շատ, շատ գործերուն որ Հայ գաղթականութեանց բաժինն և պարտականութիւնն է «Սուրբ Գործին» մէջ։

Երբ տեղւոյ մը Հայեր բաւական ատ են թուով, կրնան ունենալ սրահ

մը սեր մնայուն գրագիր կամ գործիչ մը կենայ, պատշաճ հատուցմամբ, և որ ընդհանուր տեղական մարմնոյն գործոց և հաղորդակցութեանց ծառայէ։

* * *

Երկու յոյժ կարևոր կէտեր։ —

1. Երբ տեղւոյ մը Հայեր, քանի՛ հոգի և ըլլան, մէկտեղ գալով կը հաւանին կազմուիլ ի մի ազգային մարմին, առաջին գործն է՝ այդ որոշումն տալէ ետեւ, որ հաւանութիւն տուող ամէն անձ տայ իւր անունն և հասցէն և Ատենադպիրն արձանագրէ։ Այդու միայն կրնայ գիտցուիլ թէ տեղական մարմինն կազմակերպեալ և պատասխանատու գոյութիւն ունի, և կրնայ դարձեալ ի ժողով գումարուելով իւր որոշմանց տէր ըլլալ։ Կենսական է այս պայման։

2. Պարտ է սահմանել հաւասար տարեկան տուրք ամէն արձանագրուող անձի համար — 10 սենթ, կէս տալար, կամ որչափ որ յարմար դատուի, որով թէ՛ տեղական ծախք և թէ՛ կեդրոնի գործունէութիւն կարելի ըլլայ։

Յոյժ կարևոր է ի նկատի առնուլ նաև սա ծանօթութիւն՝ թէ այսպիսի Ազգային ընդհանուր մարմնոյ մը կազմուիլը, ուրիշ կրօնական, քաղաքական, ընկերական, ուսումնական և այլ Հայ ընկերութեանց գոյութեան և գործունէութեան ոչ՛ մի արգելք բերելէ զատ, առնոյ ամենուն պիտի մատուցանէ յոյժ և օգնութիւն։ Նաեւ մերթ, երբ կարելի և օգտակար տեսնէ, պիտի դարձունէ իւր մեծ զօրութիւն գործել ուղղակի այս կամ այն ընկերութեան ձեռամբ։

* * *

Բայց այս ամենն կը ներկայացնէ իսմբագրութիւնս պարզապէս իբրև տեղեկութիւն և թելադրութիւն. տակաւ հաստատուն ձև կ՛առնու բոլոր գործը. խորհուրդներ կը փոխանակուին, բացատրութիւններ կը տրուին։

Սա չափս բացայայտ է. ժողովուրդը՝ որոյ միացեալ վառ ոգին է մեր միակ յոյժը, կրնայ իսկոյն ամէն տեղ կազմակերպիլ։ Պոսթոն, Ֆիլատէլֆիա, Ուսթըր, Փրովիտէնս, Շիդակոյ, Ֆրէզնօ, և ուրիշ քաղաքներ, թէ՛ արտ և թէ՛ յԵւրոպայ, կրնան այսօր կազմակերպիլ, արձանագրուիլ, և կարգել Քարտուղար՝ որոյ միջոցաւ հաղորդակցին։ Եւ այդ ծանուցուելով՝ կը դտնենք զմեզ կազմ և պատրաստ կեդրոնի գործոյն համար։

Եւ ամենանոցոց որ կը բաղձան համայն Հայ Գաղթականութեանցս բարօրութեան և արդիւնաւոր գործունէութեան, կ՛ըսենք — Ջա՛ն ի գործ դրէք կատարել զայդ անյապաղ։

Հայոց Աշխարհ ջատագով է ժողովրդական վարչութեան եւ գործունէութեան, եւ ուստի պիտի զբաղի ժողովրդեան կենաց պատկանեալ օրուան լուրերով և խնդիրներով։ Այս մասին ամէն խորհուրդ, թելադրութիւն և գիր, սիրով կ՛ընդունուի։

Հեռագիրն որ ծանոյց՝ Տէրութեանց ծրագիրն Հայաստանի համար, չըսեր թէ ո՞վ է պատասխանատու Սասունի անթիւ գազանային մարդասպանութեանց, կամ թէ ինչ՞ պատիժ պիտի տրուի ոճրագործներուն։ Կ՛առաջարկուի նաև արձակել քաղաքական յանցանաց պատրուակաւ բանտարկեալ բոլոր Հայեր, բայց չկայ խօսք թէ ո՞վ պիտի ազատէ գերի տարուած Հայ կիները և Հայ աղջիկները։

Օրուան խնդիրն է այդ ծրագիր, զոր Եւրոպայի Տէրութիւնք կը ներկայացուցանեն Սուլթանին հաւանութեան։ Բան զայս կարևորագոյն խնդիր կրնա՞ ըլլալ՝ արժանի հազարաւոր Հայոց նկատողութեան։ Հայաստանցի Հայն է որ հոս է, և նա գիտէ թէ ինչ է Հայրենեաց ցաւը, և հարկ է որ Եւրոպայ լսէ նորա ձայնը։

Օրինակ է այս՝ բազում այլ բաներու զորս այսօր պարտինք կատարել, և որք կրնան կատարուիլ ընդհանուր Հայ Գաղթականութեան ներկայացուցիչ մարմնոյ մը միջոցաւ միայն։

Հայոց Աշխարհի «Լրաբերն» կը ցըրուուի համայն Հայ Գաղթականութեան, և պիտի հրատարակուի որչափ սակաւ որ կարելի ըլլայ։ Նորա հրատարակութեան փափագողք կրնան տպագրութեան և այլ ծախուց մասնակցիլ՝ որևիցէ գումար սենթ կամ տոլար ղրկելով առ խմբագրութիւնն։

Հայոց Աշխարհի մասին ամէն գիր և խնդիր պարտ է ուղղել առ խմբագիրն,

Հրանտ Մ. Քիրէչճեան,

Հասցէիւ

Herant M. Kiretchjian,
76 Madison Ave.,
New York City.